18959

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# Խ. Ս. Հ. Մ.-Ի ՄՈՊՐ-Ի ՀԱՄԱ-ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵ-ՎԵՐԻ ՑԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Պատ. խմբագիր՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

327.3
Մ-89

...ագարան 1935 թ. Լենինական

35-К
21065
327.3
Մ-89

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# Խ. Ս. Հ. Մ.-Ի ՄՈՊՐ-Ի ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Կազմեց ՅԵ. ՎԱՀՐԱԴՅԱՆ

Պատ. խմբագիր՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լեն. Տեղարդի տպարան 1935 թ. Լենինական

04 JUL 2013

18959

ՀՍՍՌ-Ապ ՕՇՊ
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

60114-67

Գլավլիտ № 109. տիրաժ 1000 օր. պատվեր № 271

# ՄՈՊՐ-Ի ԳՈՐԾԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԸՆԴՈՒՆՎԱԾ ԸՆԿԵՐ ՍՏԱՍՈՎԱՅԻ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

*Լսելով ընկ. Ստասովայի զեկուցումը՝ ՄՈՊՐ-ի Գործկոմի աշխատանքների մասին՝ Համամիութենական 4-րդ համագումարն ամբողջովին ու լիովին հավանություն է տալիս ՄՈՊՐ-ի Գործկոմի քաղաքական գծին, և նրա կատարած աշխատանքը համարում է միանգամայն բավարար։*

*1. Հաշվետու շրջանում ՄՈՊՐ-ի Գործկոմի աշխատանքը ծավալվել է կատաղիորեն զարգացող սպիտակ տեռորի, գազանացած ֆաշիստական ռեակցիայի չտեսնված խրախճանքի տենդագինորեն պատրաստվող իմպերիալիստական ու հակախորհրդային նոր պատերազմի ու ամբողջ աշխարհում հեղափոխության վերելքի աճման պայմաններում։ Ի դեմս նոր, աճող-պատասխանատու խնդիրների, ՄՈՊՐ-ի Գործկոմը, համաձայն համաշխարհային առաջին կոնգրեսի վորոշումների, ՄՈՊՐ-ականների ու չկազմակերպված բնակչության միլիոնավոր զանգվածներ համախմբել է ՄՈՊՐ-ի շարքերը և աշխատավոր մասսային պայքարի յե զորակոչել ընդդեմ սպիտակ տեռորի ու ֆաշիզմի, ընդդեմ իմպերիալիստական պատերազմի և ի պաշտպանություն ԽՍՀՄ-ի։*

*2. ՄՈՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարը գոհունակությամբ արձանագրում է, վոր հաշվետու շրջանում ՄՈՊՐ-ի Գործկոմը հաջողությամբ կարողացել է միջազգային կամպանիաներ կազմակերպել և ֆաշիստական Գերմանիայի ձեռքից խլել ընկ. ընկ. Դիմիտրովին, Պոպովին ու Տանեվին, կասեցնել Սկոտսբորոյի 9 կոլանավոր նեգրերի մահապատիժը և հաջողեցնել մորուայան դատավարության վերանայումը։ ՄՈՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարն ամբողջությամբ հավանություն է տալիս ՄՈՊՐ-ի Գործկոմի աշխատանքներին՝ հակաֆաշիստական ու հակապատերազմական շարժման հետ սերտ համագործակցու-*

թյուն հաստատելու վերաբերյալ։ Համագումարն ընդգծում է նաև նեգր մասսայի մեջ կատարած աշխատանքի բնագավառում ձեռք բերած զգալի հաջողությունները և ՄՈՊՐ-ի ֆրանսիական ու հոլանդական սեկցիաների հաջողությունները՝ գաղութային տեռորի դեմ պայքար մղելու գործում։

3. ՄՈՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարը մեծ գոհունակությամբ արձանագրում է, վոր, չնայած գերմանական ֆաշիստների հրեշավոր գազանությունների, չնայած 30 հազար ակտիվիստի ձերբակալության ու ՄՈՊՐ-ի մի շարք ղեկավար աշխատակիցների սպանության, Գերմանիայի Կարմիր Օգնության յեղափոխական սեկցիան շարունակում է մնալ իր մարտական դիրքերում։ Համագումարը վողջունում է ՄՈՊՐ-ի Ավստրիական սեկցիային Ավստրիայի պրոլետարիատի փետրվարյան հերոսական ապստամբության օրերին միջազգային պրոլետարական համերաշխության դրոշակը բարձր պահելու համար։

4. Համագումարը վստահություն է հայտնում, վոր Գործկոմը հետագայում էլ իր աշխատանքի ընթացքում կուրս կվերցնի արտասահմանյան սեկցիաները միասնական ճակատի իսկական մասսայական կազմակերպություն դարձնելու, կուժեղացնի պայքարն ընդդեմ տեռորի ու ֆաշիստական ռեակցիայի, ընդդեմ շովինիզմի, ընդդեմ իմպերիալիստական պատերազմների՝ անխնա կերպով մերկացնելով սոցիալ—դեմոկրատական կուսակցության առաջնորդների պառակտողական քաղաքականությունը՝ ֆաշիստական տեռորին օգնություն ցույց տալու գործում («Մատեոտի ֆոնդ», Ավստրիական բանվորներին օգնող ս. դ. կոմիտեներ և այլն)։

5. Համագումարն առաջարկում է ՄՈՊՐ-ի Համամիութենական սեկցիայի բոլոր կազմակերպություններին՝ ուժեղացնել ՄՈՊՐ-ի արտասահմանյան սեկցիաների ուսումնասիրության գործը՝ խորհրդային յերկրի լայն մասսաներին բացատրելով ՄՈՊՐ-ի սեկցիայի ու յեղափոխական կազմակերպությունների պայքարի ու աշխատանքի պայմանները կապիտալիստական յերկրներում։ ԿԿ հրատարակչությունն իր հրատարակչական աշխատանքների մեջ պետք է ավելի մեծ չափով լուսաբանի ՄՈՊՐ-ի Գործկոմի ու վերջինիս սեկցիաների աշխատանքը։

6. Համագումարը հավաստում է, վոր ՄՈՊՐ-ի Գործկոմի ինտերնացիոնալ կապի սեկտորը բավարար հոգացողություն չունի յենթաշեֆ բանտերում տիրող դրության մասին կոնկրետ նյութեր ստանալու վերաբերյալ, ինչպես և ՄՈՊՐ-ի խորհրդային և



արտասահմանյան սեկցիաների միջև կնքած միջազգային հեղափոխական մրցման պայմանագրի կատարմանը քիչ է հետևվել, և ինտերնացիոնալ կապի աշխատանքը բավարար չափով չի ծավալվել։

7. Համագումարը ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի բոլոր կազմակերպություններին կոչ է անում՝ ուժեղացնել ինտերնացիոնալ կապի աշխատանքները՝ մանավորապես քաղբանտարկյալների շեֆության, հեղափոխական մրցման ու ՄՈՊՐ-ի արտասահմանյան սեկցիաների հետ նամակագրություն ունենալու աշխատանքները։ Համագումարը հաստատ համոզված է, վոր Միջազգային Կարմիր Օգնությունը ՄՈՊՐ-ի Գործկոմի ղեկավարությամբ, համաձայն առաջին համաշխարհային կոնգրեսի վորոշումների, ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաներին, վոր կազմակերպված են ՄՈՊՐ-ի շարքերում, կառաջնորդի դեպի նոր հաղթանակներ՝ միջազգային պրոլետարական համերաշխության ճակատում։

## ՄՈՊՐ-Ի ԽՍՀՄ-Ի ԿԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԸՆԴՈՒՆՎԱԾ ԸՆԿ. ՇԵՎԵԼՅԵՎԱՅԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. ՄՈՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարը լսելով ընկ. Շեվելյովայի հաշվետու զեկուցումը՝ ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ աշխատանքների մասին՝ ԿԿ-ի քաղաքական գիծը գտնում է ճիշտ և կատարած պրակտիկ աշխատանքը միանգամայն բավարար։

2. ԿԿ քաղաքական ճիշտ գիծը հաշվետու շրջանում ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի աշխատանքների մեջ մի շարք կոնկրետ հաջողություններ ու նվաճումներ է ապահովել։ Այս հաջողություններն ամենից առաջ արտահայտվել են մասսայական—ինտերնացիոնալ աշխատանքի բարելավումով, մի աշխատանք, վոր ապահովել է ՄՈՊՐ-ի շարքերը 5,566,200-ից (առ 1-ն հունվարի 1931 թ.) մինչև 8,217,824 (առ 1-ն հունվարի 1934 թ.) անդամով, ինչպես և արտահայտվել է ՄՈՊՐ-ի ստորին բջիջը կազմակերպչորեն ամրապնդելով։ Համագումարն առանձին գոհունակությամբ նշում է, վոր ՄՈՊՐ-ի անմիջական խնդիրները մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու ընդհանուր քաղաքական խնդիրների հետ կապելու վերաբերյալ 3-րդ համագումարի տված դիրեկտիվները

ՄՈՊՐ-ի ԿԿ կողմից կատարելը վճռական ֆակտոր է հանդիսացել ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի հետագա հաջողությունների գործում յեվ բարձրացրել է ՄՈՊՐ-ի, վորպես խորհրդային հասարակայնության մասսայական կազմակերպության հեղինակությունը։

Միաժամանակ համագումարը նշում է, վոր առանձին դեպքերում ԿԿ անբավարար կերպով է կազմակերպել կայացրած վորոշումների կատարման ստուգումը, մանավանդ ՄՈՊՐ-ի տեղական կազմակերպությունների նկատմամբ։

3. Ֆաշիստական տեռորի կատաղի խրախճանքը, իմպերիալիստական նոր պատերազմի և Խորհրդային Միության վրա հարձակվելու սպառնալիքը ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի առաջ դրել են ՄՈՊՐ-ի աշխատանքն այնպես կազմակերպելու խնդիրը, վոր քաղբանտարկյալներին արվող օգնությանը զուգընթաց, ապահովվի նաև նրանց ընտանիքների ու ԽՍՀՄ-ում գտնվող քաղբանտարկյալներին օգնություն հասցնելու գործը։

Համագումարը նշում է, վոր հիմնականում խնդիրը նույնպես բավարար կերպով է լուծված։

Կատարված է 3-րդ համագումարի վորոշումը՝ Սառատովայի անվան առաջին ինտերնացիոնալ մանկատունը կառուցելու մասին։ Զգալի չափով ավելացել են նոր յեկող քաղբանտարկյալներին ընդունելու և սպասարկելու ծախսերը, վոր ՄՈՊՐ-ի համամիութ. 3-րդ համագումարից մինչև 4-րդը կազմում եյին 2247500 ռուբ., ընդդեմ 2-րդ համագումարից մինչև 3-րդը յեղած 472561 ռուբլու։

Զգալի աշխատանք է կատարված ՄՈՊՐ-ի արտասահմանյան պատգամավորներին ընդունելու և սպասարկելու գործում։

Համագումարը պարտավորեցնում է տեղական կազմակերպություններին՝ մասսայական աշխատանքի վորակը վճռականորեն բարելավելով և ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեյի առաջ իր բոլոր պարտականություններն անթերի կատարելով՝ այս տեսակետից ապահովել ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի հետագա հաջողությունները, հատուկ ուշադրություն դարձնել քաղբանտարկյալների մեջ կատարվող քաղլուս աշխատանքին։

4. Համ. Կ (բ) Կ 17-րդ համագումարի պատմական վորոշումները, մանավանդ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ու կապիտալիստական յերկրների բանվորների ինտերնացիոնալ կապի հետագա ամրապնդման, պրոլետարական ինտերնացիոնալիզմին հավատարիմ լինելու, անկուսակցական ակտիվին Լենինյան ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու վերաբերյալ վորոշումները մեր կազմակերպության առաջ նոր ու պատասխանատու և մեծ խնդիրներ են դնում։



Համագումարը մատնանշում է, վոր այժմ գլխավոր խնդիրն այն է, վոր մեր կազմակերպության բոլոր օղակներում, առանց բացառության կազմակերպչական—գործնական աշխատանքը ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի քաղաքական դիծը դրվի բարձր աստիճանի վրա և այդպիսով ապահովվի ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի բազմամիլիոն կազմակերպությունների հետագա զորակոչը՝ յերկրորդ հնգամյակի մեծ խնդիրներն իրականացնելու համար։ Արտասահմանյան հեղափոխական մարտիկներին մեր յեղբայրական օգնությունը հետագայում ավելի ուժեղացնելու և քաղբանտարկյալների չեֆությունն ու նրանց հետ ինտերնացիոնալ կապն ամրապնդելու համար։

5. Համագումարը գտնում է, վոր ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի Կ Կ-ի 6-րդ պլենումի (3-րդ գումարման) վորոշումները՝ աշխատանքի վերակառուցման և ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ստորին կազմակերպությունները ղեկավարելու մեթոդների մասին՝ ժամանակին են կայացվել։

Այս վորոշումների մեջ կարևորագույնը ղեկավարման սիստեմը վերից վար արտադրական սկզբունքով կառուցելն ու պաշտոնեյականությունից հրաժարվելն է, վորպեսզի ապահովվի ՄՈՊՐ-ի Կ Կ, յերկրամների, մարզկոմների ու շրջկոմների ղեկավարությունն ստորին բջիջի—մեր կազմակերպության հիմնական ու գլխավոր օղակի վրա։

Միաժամանակ համագումարը պնդում է, վոր այս վերակառուցումը տեղական մի շարք կազմակերպությունների մեջ դեռ ամենևին էլ բավարար ընթացք չունի. Կ Կ-ին պարտավորեցվում է՝ այս ուղղությամբ անմիջապես հիմնական բեկում առաջացնել։

6. Վերակառուցման հաջողությունն ապահովելու համար համագումարը գլխավորն ու վճռականը համարում է կազմակերպչական խնդիրը։ Արդի պայմաններում, անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու շրջանում, կազմակերպչական հարցը միանգամայն բացառիկ նշանակություն է ստանում և բանալի յե հանդիսանում այն կոնկրետ խնդիրների հաջող լուծման համար, վոր տվյալ շրջանում ծառացած են ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի կազմակերպությունների առաջ։ Պետք համառ կերպով աշխատել, վորպեսզի կազմակերպչական ղեկավարությունը միանգամայն ապահովի մեր քաղաքական լոզունգները կյանքում կիրառելու գործը։

Համագումարը շեշտում է, վոր «կազմակերպչական աշխատանքի մեջ գլխավորը մարդիկ ընտրելն ու կատարածն ստուգելն է» (ՍՏԱԼԻՆ) և պարտավորեցնում է տեղական բոլոր կազմակեր-

պությունների առանց բացառության, իրենց ուշադրության կենտրոնը դարձնել՝

ա) ՄՈՊՐ-ի ղեկավար կադրեր ընտրելը ՄՈՊՐ-ի ստորին բջիջի, շրջանային կոմիտեյի, մարզային, յերկրային և հանրապետական կոմիտեների համար. անհրաժեշտ է առաջ քաշել ղեկավար աշխատանքի համար (թե հասարակական և թե վճարովի) յեռանդուն, ստուգված ու կարգապահ դարձած ընկերների, վորոնք անկեղծորեն նվիրված են ՄՈՊՐ-ի գործին, ընդունակ են ՄՈՊՐ-ի վողջ անդամներին ի մի համախմբել և տանել դեպի դժվարությունների հաղթահարումն ու ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ առաջադրած խնդիրների լուծումը։

բ) Ստորին կազմակերպությունները ղեկավարելու գրասենյակային-բյուրոկրատիկ, թղթե մեթոդների անհապաղ լիկվիդացիան, վոր մինչև օրս էլ տեղի ունեն առանձին կազմակերպություններում և ոդակներում, և կայացրած վորոշումների կատարման ամենօրյա սիստեմատիկ ոպերատիվ ստուգումը, այս կամ այն դիրեկտիվն իրականացնելու յեղանակն ուսուցանելը՝ թե ակտիվը և թե միաժամանակ վողջ մոպրականները պայքարում են հանուն ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ դիրեկտիվների կատարման։

Ստորադաս կազմակերպությունների կողմից վերադաս որգանների վորոշումներն ու դիրեկտիվները կատարելու ամենօրյա ստուգման իրականացումը համագումարը յուրաքանչյուր տեղական կազմակերպության ղեկավարների, (ազգ. ԿԿ., յերկրկոմների, մարզկոմների, շրջկոմների ու բջիջների նախագահների) անձնական պարտականությունն է դարձնում։

7. Համագումարը պարտավորեցնում է ՄՈՊՐ-ի տեղական կազմակերպությունների բոլոր ղեկավար որգաններին, ինչպես և ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ին վճռականապես կրճատել զանազան տեսակի շրջաբերականները ու դիրեկտիվ նամակներ տալը և փոխարենը կազմակերպել ամենօրյա կոնկրետ ու կենդանի ղեկավարությունը և ստորին կազմակերպությունների ղեկավարներին հրահանգներ տալը, վարժեցնելն ու գործնական ոգնություն ցույց տալը։ ՄՈՊՐ-ի Կոմիտեների նախագահներն ու քարտուղարները իրենց ամբողջ աշխատանքի ընթացքում միշտ էլ անձնական օրինակ պետք է ցույց տան ստորին ակտիվին՝ նրանց վրա դրված պարտականությունները կատարելու և իրենց կողմից ՄՈՊՐ-ի հասարակական խստագույն դիսցիպլինան պահպանելու գործում, առաջին հերթին՝ յուրաքանչյուր տեղական կազմակերպության պարտավորությունները կատարելու գործում՝ հանդեպ ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի Կենտրոնական կոմիտեյի։



8. Կատարման ստուգումը կազմակերպելու գործում վճռական դեր պետք է խաղան վերստուգիչ հանձնաժողովները։ Սակայն համագումարը նշում է, վոր վերստուգիչ հանձնաժողովները մինչև օրս մեր կազմակերպության բոլոր ոդակներում, առանց բացառության, միանգամայն անբավարար կերպով են աշխատում։ Անբավարար է յեղել տեղական վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի ղեկավարությունը ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ իսկ կողմից։ Համագումարն առաջարկում է ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ին՝ ուժեղացնել իր ոպերատիվ ղեկավարությունը վերստուգիչ հանձնաժողովներին հանձնարարված աշխատանքի համար, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովների կազմի համար ՄՈՊՐ-ի ամենալավ, յեռուն և ստուգված ակտիվներ առաջ քաշելու գործն ապահովել։

9. ՄՈՊՐ-ի Կոմիտեների վողջ աշխատանքը պետք է կառուցված լինի հասարակական կամավոր ակտիվի ուժերի ոգտագործման վրա, նրանց լայն կերպով պետք է մասնակից դարձնել այդ աշխատանքներին։ Համագումարը հանձնարարում է Կենտրոնական կոմիտեյին՝ միանգամ ևս վերանայել յուրաքանչյուր տեղական կազմակերպության վճարովի հաստիքները, հետագայում այն կրճատելու և յուրաքանչյուր հանրապետական յերկրային ու մարզային կոմիտեյում վճարովի աշխատակիցների ամենանվազագույն թիվ թողնելու նպատակով։ Ընդ վորում հաստատուն կերպով սահմանել, վոր այդ կոմիտեներում, ինչպես և քաղաքի արդյունաբերական և գյուղատնտեսական խոշոր շրջանների բոլոր կոմիտեներում անխտիր, աշխատանքը հիմնականում պետք է կատարվի կամավոր հրահանգիչների ուժերով։ Շրջկոմներից առանձին բջիջներին հրահանգելու համար, յերկրային, կոմիտեներին, մարզային կոմիտեներին զուգընթաց, առանձնապես լայն կերպով պետք է մասնակից դարձվեն կամավոր մոպրական ակտիվները (Հողժողկոմատի, Լուսժողկոմատի, տրեստների, կոոպերացիայի, արհմիությունների, քաղբաժինների ու այլոց ՄՈՊՐ-ի բջիջների ակտիվիստները) ոգտագործելով զանազան պաշտոնական շրջագայումներ։

ՄՈՊՐ-ի Կոմիտեների հրահանգիչները (վճարովի և հասարակական) պատասխանատու պետք է լինեն շրջանների առանձին խմբի համար, ստուգել ու գործնականորեն ոժանդակել նրանց աշխատանքին։ Շրջանների այս բաշխումը պետք է կատարվի ըստ արտադրական բնույթի։ Շրջանային կոմիտեներում կոմիտեյի յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր արտահաստիքա

յին հրահանգիչ պատասխանատու պիտի լինի վորոշ խումբ բջիջների համար։

10. Կամավոր ակտիվը ՄՈՊՐ-ի կոմիտեների աշխատանքներին մասնակից դարձնելու հիմնական ձևը պետք ե լինի շրջանային, մարզային, յերկրային ու ազգային կոմիտեներին կից սեկցիաներ կազմակերպելը, վոր պետք ե գլխավորեն կոմիտեյի պրեզիդիումի անդամները՝ արդյունաբերական ու տրանսպորտի ասպարեզում կատարվող ՄՈՊՐ-ի աշխատանքի սեկցիա, գյուղատնտեսության ասպարեզում կատարվող ՄՈՊՐ-ի աշխատանքի սեկցիա, ինտերնացիոնալ կապի, ինչպես և ֆինանսական-հաշվային, ինֆորմացիոն, վիճակագրական և այլ աշխատանքներ կատարելու համար ՄՈՊՐ-ի սարքին բջիջներից ակտիվներ պետք ե մասնակից դարձնել այդ սեկցիաներին։

Այս բոլոր աշխատանքներում ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր կոմիտեյի քաղաքական կարեվորագույն խնդիրը պետք ե լինի անկուսակցական ակտիվը կոմիտեյի մեջ ներգրավելը:

11. ՄՈՊՐ-ի քաղաքական ու կազմակերպչական աճող խնդիրները յուրաքանչյուր ղեկավարից ու ակտիվիստից պահանջում են գաղափարական-քաղաքական սպառազինում, ինչպես նաև ՄՈՊՐ-ի տեսական ու գործնական աշխատանքների տիրապետում։

Այս կապակցությամբ անհրաժեշտ ե թե համամիութենական ինտերֆակի և թե տեղական (ցերեկվա և գիշերվա) ինտերֆակների աշխատանքի հետագա ամրապնդում: Ընդվորում տեղական կազմակերպություններն ամենալուրջ ուշադրություն պետք ե դարձնեն ինտերֆակների համար լավագույն թեկնածուներ ընտրելու, բաշխումը ժամանակին ու լրիվ կատարելու գործին. ինտերֆակների համար թեկնածուներ ընտրելու պատասխանատվությունը դրվում ե ՄՈՊՐ-ի կոմիտեների նախագահության վրա։

Համագումարը պարտավորեցնում ե ՄՈՊՐ-ի բոլոր կազմակերպություններին բեկում ձեռք բերել ՄՈՊՐ-ի պրոպագանդիստական աշխատանքները ծավալելու, կարճատև դասընթացներ ու խմբակներ, սեմինարներ, հեռակա ուսուցում կազմակերպելու և ՄՈՊՐ-ի պրոպագանդի մասսայական նոր ձևեր («Ինտերնացիոնալ կոնգրեսներ», «ԽՍՀՄ-ի ժողովուրդների համագումար», «ՄՈՊՐ-ի ժամ» և այլն) արմատացնելու գործում։

12. Ղեկավար կադրերի և սարքին ակտիվի տեսական պատրաստության գործում մեծ դեր պետք ե խաղա ՄՈՊՐ-ի գրականությունը։ Առանձին ուշադրություն պետք ե հատկացնել ն-



վական և ինտերնացիոնալ լեզուներով գրականություն հրատարակելու գործին։ Համագումարը գտնում ե պարբերական և վոչ պարբերական գրականությունը տարածելու համար գոյություն ունեցող սիստեմն անբավարար և առաջարկում ե Կենտրոնական կոմիտեյին ամենակարճ ժամանակում անել այն ամենը, ինչ անհրաժեշտ ե այդ սիստեմը վերակառուցելու համար, այն հաշվով, վոր գրականությունն սարքին բջիջին, սարքին ակտիվին հասնի։

13. Համագումարը ՄՈՊՐ-ի ԿԿ, յերկրկոմների ու մարզկոմների առաջ խնդիր ե դնում՝ ՄՈՊՐ-ի բջիջներ ստեղծել բոլոր ՄՏԿ-ներում, ՄԱՄ-ներում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում։ ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների ՄՈՊՐ-ի բջիջները ղեկավար դեր պետք ե խաղան կոլտնտեսական բջիջների նկատմամբ։

14. ՄՈՊՐ-ի բոլոր կազմակերպությունների հիմնական ու գործնական աշխատանքն ընթացիկ տարում պետք ե լինի ՄՈՊՐ-ի շարքերի խտացումը, նպատակ ունենալով ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ը դարձնել 12 միլիոնանոց կազմակերպություն։ Յուրաքանչյուր կոմիտեյի մարտական խնդիրը պետք ե լինի նոր բջիջներ ստեղծելը, ՄՈՊՐ-ի շարքերը խտացնելը, նոր անդամներ ներգրավելը, խորհրդային Միության բոլոր շրջաններում անխտիր կերպով ՄՈՊՐ-ի կազմակերպություններ ստեղծելը։ Համագումարն առանձնապես ուշադրությունն ե հրավիրում ՄՈՊՐ-ի նոր հավաքագրված անդամներին կազմակերպչականորեն ամրապնդելու գործի վրա՝ նրանց անդամությունը ձևակերպելու և ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամին բջիջի ամենօրյա գործնական աշխատանքին մասնակից դարձնելու միջոցով՝ ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամին տալով կոնկրետ բեռնավորում, նրանց մեջ սիստեմատիկ կերպով դաստիարակչական աշխատանք կատարելով, խմբակներ ընդգրկելով, մի բան, վոր անդամների հոսունության դեմ պայքարելու լավագույն միջոցն ե հանդիսանում։

15. Համագումարը հաստատում ե ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ 5-րդ պլենումի վորոշումները (ապրիլ 1933 թ.) ֆինանսական-քաղաքականության նոր սկզբունքների մասին, անդամավճարներն ու չեֆական 10 կոպեկը գանձելու և կամավոր նվիրատվությունից հրաժարվելու միջոցով։ Այս բանին զուգընթաց, համագումարը նշում ե ՄՈՊՐ-ի մի շարք կազմակերպությունների աշխատանքը՝ ՄՈՊՐ-ի կենտրոնական կոմիտեյի առաջ 5-րդ պլենումի վորոշումներն ու իրենց ֆինանսական պարտավորությունները չկատարելու գործում (Հյուսիսային Կովկաս, Կենտ. սևահող մարզ, Ստորին

Վոլգա, Արեվմտյան մարզ, Ադրբեջան, Ուրալ և այլն)։ Այս կազմակերպությունների վատ աշխատանքի հետեվանքով կապիտալի բանտարկյալների օգնության ֆոնդի միջոցներն զգալի չափով պակաս են ուղղել ու կազմակերպական չափազանց մեծ ծախսեր են տեղի ունեցել։ Համագումարը ՄՕՊՐ-ի Կենտրոնական կոմիտեյին պարտավորեցնում է՝ կայուն գիծ տանել, որ ապահովվի ֆին պլանի 100 տոկոսային կատարումը և ամեն տեսակի ծախսեր ի վճռական ու անխնա կրճատումը։ Համագումարը շեշտում է, որ մի շարք կազմակերպությունների ծախսերը խիստ կերպով համաձայնեցված է յեկամտային նախահաշիվը կատարելու հետ։ Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին՝ ծախսերի համար կայուն կերպով միջոցներ հատկացնելուն զուգընթաց յուրաքանչյուր կազմակերպության համար յեկամուտների նկատմամբ ծախսերի կայուն տոկոս սահմանել։

Տեղական կազմակերպությունների բոլոր ուժերն այժմ ուղղված պիտի լինեն այն բանին, որ 1934 թ. ապահովված լինի կապիտալի բանտարկյալների օգնության ֆոնդին ԽՍՀՄ-ի ՄՕՊՐ-ի բյուջեյով սահմանված 17 միլիոն ռուբլու գանձումը։

16. Կազմակերպությունների աճման գործում ՄՕՊՐ-ի առաջ ծառացած խնդիրների կատարումը, հեղափոխության մարտիկների առաջ նյութական պարտավորությունների կատարումը պահանջում են անդամների հաշվառման գործը ճիշտ հիմքերի վրա դնել և անդամավճարները մուծելու հիման վրա սիստեմատիկ կերպով ստուգել անդամների ակտիվությունը։ Ուստի և իբրեվ առաջնակարգ խնդիր, պետք է դրվի ՄՕՊՐ-ի անդամների թվական ու վորակական կազմի օրինակելի հաշվառման ստեղծումը՝ յուրաքանչյուր բջիջի համար առանձին շրջանում, մարզում, յերկրում, հանրապետության մեջ՝ ամբողջ առումով։ Կոմիտեների ղեկավար կազմը և առաջին հերթին նախագահները, ինչպես և վերստուգիչ հանձնաժողովների նախագահները ԿԿ-ի և անդամների առաջ անձնական պատասխանատվություն պետք է կրեն ՄՕՊՐ-ի անդամներին կազմակերպելու հաշվառման գործում։

17. Համամիութենական 4-րդ համագումարի կողմից թե ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի կենտրոնական կոմիտեյին և թե տեղական բոլոր կազմակերպություններին առաջադրած խնդիրները հաջողությամբ կարող են կատարվել մեր կազմակերպության բոլոր օղակներում պրոլետարական անողոք ինքնաքննադատությունը՝ ՄՕՊՐ-ի բջիջների ու կազմակերպությունների, սոցիալիստական մրցումը հետագա ամենալայն կերպով՝ ըստ աշխատանքի հիմ-



նական ցուցանիշների՝ ծավալելու ակտիվիստների ու վճարովի աշխատակիցների մեջ ՄՕՊՐ-ի կազմակերպական-գործնական աշխատանքներում հարվածայնությունը, ծավալելու հանրային խիստ դիսցիպլինան ու հեղափոխական աչալրջությունը պահպանելու և մոպրական յուրաքանչյուր կոպեկի համար խնայողության խստագույն ռեժիմն իրականացնելու պայմաններում։

Համագումար հաստատ հույս է հայտնում, որ ՄՕՊՐ-ի բոլոր տեղական կազմակերպությունները, ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի կենտր կոմիտեյի ղեկավարությամբ, հենվելով ունենալով անդամների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը՝ կանեն այն բոլորը, ինչ անհրաժեշտ է ՄՕՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարի կամքը հաջողությամբ ու մարտականորեն կատարելու համար, մի կամք, որ ուղղված է սպիտակ տեռորի ու ֆաշիզմի զոհերի բարոյական ու նյութական օգնության գործն ըստ ամենայնի ամրապնդելուն, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ԽՍՀՄ-ի ու կապիտալիստական յերկրի աշխատավորության ինտերնացիոնալ կապի հետագա ամրապնդումը։

## ՄՕՊՐ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.

1. Համամիութենական 4-րդ համագումարը նշում է, որ ընթացիկ շրջանում գյուղում կատարած ՄՕՊՐ-ի աշխատանքների բնագավառում մի շարք նվաճումներ կան թե կազմակերպությունների աճման և թե մասսայական-ինտերնացիոնալ աշխատանքը ՄՏԿ-ներում, կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում և աշխատավոր մենատնտեսների մեջ ծավալելու գործում։ ՄՕՊՐ-ի անդամների-կոլտնտեսականների թիվն ամբողջ կազմակերպության մեջ 408.803-ից (առ 1-ն հունվարի 1931 թ.) աճել է մինչև 1.345.156-ի (առ 1-ն հունվարի 1934 թ.) վորը 1931 թ. նկատմամբ կազմում է 329,1 տոկոս։ Մասսայական աշխատանքի հիման վրա, ՄՕՊՐ-ի ակտիվ ուժերով գյուղում իրացվել է. «Հնգամյակի 3րդ վճռական տարվա» փոխառությունից 18.145.000 ռուբլի, «Հնգամյակի 4-րդ ավարտական տարվա» փոխառ. 48.548.000 ռուբ և «Յերկրորդ հնգամյակի» փոխառությունից (1-ին տարվա հրատարկությունից) 80.815.239 ռուբլի (առ 1 մարտի 1934 թ.)։ Յերկրորդ հնգամյակի առաջին տարվա գարնանը ՄՕՊՐ-ի բջիջները պետական պլանից դուրս ցանել են մոպրական 20292 ինտերնացիոնալ հեկտար՝ հօգուտ հեղափոխական մարտիկների օգնության ֆոնդի։

2. Զնայած ունեցած նվաճումներին՝ գյուղի առանձին կազմակերպություններում (Ստալինգրադյան և Սարատովյան յերկրներ, Չելյաբինսկի և Սվերդլովսկի մարզերը) ՄՈՊՐ-ի կատարած աշխատանքների վիճակը համամիութենական 4-րդ համագումարը գտնում է անբավարար։ ՄՈՊՐ-ի համամիութենական 3-րդ համագումարի ցուցումները՝ գյուղի սոցիալիստական սեկտորի ՄՈՊՐ-ի բջիջները «ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների բանվորների, կոլտնտեսականների ու մենատնտեսների ինտերնացիոնալ դաստիարակության իսկական հենակետներ» դարձնելու մասին, ինչպես և ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ 5-րդ պլենումի վորոշումները՝ ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների ՄՈՊՐ-ի բջիջների ամրապնդման ու նրանց նոր խնդիրների մասին՝ լրիվ չեն կատարվել։ Այս բանի հիմնական պատճառը ղեկավարության գրասենյակային բյուրոկրատական թղթե մեթոդների առկայությունն է և ՄՈՊՐ-ի կոմիտեներից շատերի անուշադրությունը՝ կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների սարքին բջիջների նկատմամբ։

Նկատի ունենալով ԽՍՀՄ-ի աճող խնդիրները, մանավանդ գյուղում՝ համագումարը պարտավորեցնում է ՄՈՊՐ-ի ազգային ԿԿ-ին, յերկրկոմներին, մարզկոմներին ու շրջկոմներին՝ արմատապես փոխել ՄՈՊՐ-ի գյուղական կազմակերպությունները ղեկավարելու պրակտիկան։ Աշխատանքի ասպարեզում գլխավոր հենարանը պետք է դարձնել կատարման կոնտրոլն ու ստուգումը։ Շրջանը ղեկավարելու բարելավման խնդիրն այն է, վոր յերկրկոմի, մարզկոմի և ազգային ԿԿ-ի ղեկավարման սիստեմն ըստ տերիտորիալ արտադրական սկզբունքների վերակառուցելով ու հենակետ ունենալով խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների ակտիվը՝ շրջանի յուրաքանչյուր բջիջի հետ կենդանի կապ ստեղծել և կարգավորել համաձայն իրենց արտադրական խնդիրների (հատիկային, վուշագործական, անասնապահական, ճակնդեղի), ուսումնասիրել օրգանների ու բջիջների աշխատանքի կոնկրետ պայմանները ու առանձնահատկությունները յեվ սիստեմատիկ կերպով ստուգել նրանց իսկական աշխատանքը։

3. Համագումարն ընդգծում է ՄՈՊՐ-ի շրջանային կոմիտեների, վորպես ՄՈՊՐ գյուղական աշխատանքների ղեկավար կենտրոնների բացառիկ մեծ դերը։ Համագումարը մարզկոմների, յերկկոմների ու ազգային ԿԿ-ի առաջնակարգ խնդիր է առաջադրում ստուգված և ՄՈՊՐ-ի սարքին աշխատանքներին տիրապետող Շրջկոմների ղեկավարների (պրեզիդիումի նախագահի, քարտուղարի ու անդամների, կամավոր հրահանգիչների) ընտրությունը, վորոնք



կարող են իրենց շուրջը համախմբել կոլտնտեսական ակտիվի
լայն խավերը, մանավանդ կոլտնտեսուհիների, յերիտասարդու-
թյան, կարմիր բանակային-փոխնիկների, ՄՏԿ-ների՝ ՄԱՄ-ների
ու խորհտնտեսությունների բանվորների միջավայրից։ Հարվածա-
յին կոլտնտեսականներից, տրակտորավարներից, ձիապաններից,
կթարարուհիներից լավագույն ակտիվիստները, ինչպես և գյուղի
կոլտնտեսական ուժերից (լուսաշխատավորներից, գյուղատնտես
ներից, ճարտարագիտական-տեխնիկական աշխատողներից և այլն)
լավագույնները պետք է ներգրավվեն բջիջների բյուրոների ու
շրջկոմների կազմի մեջ։ Ազգային ԿԿ-ը, յերկրկոմներն ու մարզ-
կոմները գյուղական ՄՈՊՐ-ի ակտիվի դաստիարակման սիստեմա
տիկ աշխատանքը պետք է ապահովեն՝ դասընթացների ու խմբ-
բակների ցանց կազմակերպելու միջոցով, որինակ՝
ա)Շրջկոմների քարտուղարներ պատրաստելու և վերա-
պատրաստելու դասընթացների,
բ) ՄՈՊՐ-ի ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների աշխա-
տանքների հրահանգիչներ պատրաստելու և վերապատրաստելու
դասընթացների միջոցով։
Համագումարը հանձնարարում է ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ին
համապատասխան չափով գրականությամբ ու ծրագրերով ապա-
հովել ՄՈՊՐ-ի տեղական խմբակներն ու դասընթացները։
ՄՈՊՐ-ի Շրջկոմներն, այս բանին զուգընթաց, պետք է
կազմակերպեն կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների
ու ՄՏԿ-ների ՄՈՊՐ-ի բջիջների քարտուղարների դասընթացներ
ու խմբակներ, անդամավճար գանձողների խմբակներ, ՄՈՊՐ-ի
աշխատանքների առանձին հարցերին վերաբերյալ ակտիվի,
առանձին յերկրներ, ՄՈՊՐ-ի արտասահմանյան աշխատանքները
և այլն ուսումնասիրող թեմատիկ խմբակներ։
4. Համագումարն ազգային ԿԿ-ի, յերկրկոմների, մարզկոմ-
ների ու Շրջկոմների հատուկ ուշադրությունն է հրավիրում
ՄՈՊՐ-ի՝ ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների աշխատանքի
մշտական կազմակերպիչներ ընտրելու, ինչպես և աշխատանքի
մեջ նրանց ամրապնդելու ապահովության վրա։
Համագումարը նաև պարտավորեցնում է ՄՈՊՐ-ի բոլոր
կոմիտեներին ու բջիջներին՝ սերտ կապ հաստատել կուս. կազմա-
կերպությունների ու քաղբաժինների, ինչպես և արհմիութենական
կազմակերպությունների հետ, համաձայնեցնել իրենց աշխատան-
քի պլանը և ըստ ամենայնի աջակցել քաղբաժիններին աշխա-
տանքներին։

5. Համագումարն առաջարկում է բոլոր կազմակերպություններին՝ հատուկ ուշադրություն դարձնել կանանց—կոլտնտեսուհիների ու մենատնտեսուհիների—մեջ կատարվող աշխատանքի բացառիկ կարևորությանը, և վորպես առանձին կարևոր խնդիր՝ նրանց կոլտնտեսություններ ներգրավելուն և կազմակերպության ղեկավար աշխատանքի համար նրանց առաջ քաշելուն։ Անհրաժեշտ է միաժամանակ ուժեղացնել յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքը, ծավալել յերիտասարդությունից, ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների յերիտասարդ բանվորներից, ինչպես և աշխատավոր մենատնտեսներից ՄՈՊՐ-ի շարքերի համար մասսայական հավաքագրում կատարելը, յերիտասարդությունից լավագույն հարվածային մոպրականներին առաջ քաշել ՄՈՊՐ-ի ղեկավար աշխատանքի համար՝ ամբողջ այս աշխատանքը կապելով կոմյերիտական կազմակերպությունների հետ, ձեռք բերելով ԿԻՄ-ի 5-րդ կոնգրեսի վորոշումների կատարյալ իրականացում։

Ըստ ամենայնի պետք է ուժեղացվի նաև յերեխաների մեջ կատարվող աշխատանքը՝ ինտերնացիոնալ դաստիարակությունը դպրոցներում ու ՊՅԵՈ-ի խմբակներում ծավալելու և ՊՅԵՈ-ի բոլոր անդամներին՝ ՄՈՊՐ-ի բջիջների կողմից՝ գյուղում մասսայական միջոցառումներ (ՄՈՊՐ-ի մասսայական կամպանիաներ, սերմահավաք ու պտուղ, ՄՈՊՐ-ի ինտերնացիոնալ հեկտարների ցանք, քաղհան, բերքահավաք, բերքի պահպանություն և այլն) կազմակերպելու գործնական աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով, սակայն առանց յերեխաներին ծանրաբեռնելու, վորը կարող է վնաս պատճառել նրանց ուսման ու հանգստի կազմակերպմանը։

6. Համագումարը պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին՝ ագիտացիայի ու պրոպագանդայի բոլոր միջոցները օգտագործելով՝ վճռականապես ուժեղացնել կոլտնտեսականների, մենատնտեսների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների բանվորների ինտերնացիոնալ-դաստիարակության գործը, օգտագործելով կենտրոնական ու շրջանային մամուլը, ռադիոն, ակումբներն ու կոլտնտեսական անկյունները, խրճիթ-ընթերցարանները և այլն

Համագումարը առաջարկում է ՄՈՊՐ-ի կազմակերպություններին՝ չթուլացնել աշխատանքը աշխատավոր մենատնտեսների և կոլտնտեսականների մեջ։

7. Համամիութենական 4-րդ համագումարը կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների ՄՈՊՐ-ի բոլոր կազմակերպությունների առաջ դնում է հետևյալ խնդիրները՝



60114.67

1. Յուրաքանչյուր մոպրական պետք է լինի հարվածային կոլտնտեսական, նա պետք է պայքարի կոլտնտեսական կարգերի ամրապնդման, բերքատվության բարձրացման, կուլտուրական յեվ ունեվոր կյանքի համար։

2. Մոպր-ի յուրաքանչյուր գյուղական բջիջի պատվի գործը պետք է լինի մոպրական ինտերնացիոնալ հեկտար ցանելու մասին ԿԿ մարտական առաջադրության կատարումը, այս հեկտարների բարձր բերքատվության ու բերքը ժամանակին պետության հանձնելու համար պայքարի դուրս գալու խնդիրը։

3. Յուրաքանչյուր մոպրական ու ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր գյուղական բջիջ պետք է ուժեղացնի կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ինտերնացիոնալ դաստիարակությունը, կանոնավորի ինտերնացիոնալ կապը ու շեֆական գրագրությունները, ժամանակին ապահովելով անդամավճարների 100 տոկոսով գանձումը։

Շեֆական տաս կոպեկանոցների գանձումը։

8. Համագումարը կոչ է անում խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների բոլոր մոպրականներին՝ ըստեղծել ՄՈՊՐ-ի անվան հարվածային բրիգադներ, բարձրացնելով նրանց ղեկավար դերը՝ կոլտնտեսական գյուղացիության և աշխատավոր մենատնտեսների ինտերնացիոնալ դաստիարակության և գյուղի աշխատանքի մասին կուսակցության և կառավարության դիրեկտիվները կատարելու համար մղվող պայքարի շուրջը։

ՄՈՊՐ-ի անունը կրող կոլտնտեսություններն ու բրիգադները բոլշևիկյան աշխատանքի իսկական օրինակ պետք ցույց տան թե իրենց վողջ արտադրական և թե մասսայական ինտերնացիոնալ աշխատանքի կատարման ասպարեզում։

## ՄՈՊՐ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Համաձայն ՀամԿ(բ)Կ Կ-ի և Ժողկոմխորհի 33 թ. հուլիսի 3-ի վորոշումների, վոր վերաբերում է տրանսպորտի աշխատանքների վերակառուցմանը, այս պատմական վորոշումը խոշոր խթան պիտի հանդիսանա ՄՈՊՐ-ի տրանսպորտային բջիջների վերակառուցման աշխատանքներին, ինչպես նաև ինտերնացիոնալ մասսայական աշխատանքների բարձրացմանը։

2. ՄՈՊՐ-ի Համամիութենական 4-րդ համագումարը իրավացի յե գտնում ՄՈՊՐ-ի յերկաթուղային բջիջներ կազմակերպելը։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Միաժամանակ համագումարը նշում է, որ չնայած մեկ ու կես տարվա իրենց գոյության՝ ՄՈՊՐ-ի ճանապարհային կոմիտեները կատարելապես չեն յուրացրել այն խնդիրները, որ տրանսպորտի բնագավառում են առաջադրված լինել ՄՈՊՐ-ին, և աշխատանքի վերակառուցման գործում պատշաճ տեմպեր չեն ապահովել։ Մի շարք ճանկոմներում միանգամայն անբավարար հիմքերի վրա է դրված գծի բջիջները կոնկրետ և օպերատիվ կերպով ղեկավարելու գործը։ Վատ հիմքերի վրա է դրված անդամների հաշվառման գործը (Թուրքսիբ, միջասիական երկաթգիծ). ճանկոմների ճնշող մեծամասնությունը չի կատարել ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի դիրեկտիվները՝ հեղափոխության մարտիկների օգնության ֆոնդին միջոցներ փոխադրելու մասին, իսկ նրանցից մի քանիսն էլ (Հարավային, Սամարա-Զլատոուստի, Հյուսիսային Կովկասի և Հարավ-Արևմտյան երկաթգիծ) ավելի շատ միջոցներ են ծախսել, քան հավաքել են։

Մի շարք ճանկոմներում ՄՈՊՐ-ի աշխատանքները չեն հյուսվում ճանապարհի ու շրջանի արտադրական կոնկրետ խնդիրների կատարման հետ։

3. Համագումարը մատնանշում է, որ ՄՈՊՐ-ի ճանկոմներն ու շրջկոմներն իրենց աշխատանքները պետք է կազմակերպեն հաշվի առնելով աշխատանքի ամեն մի բնագավառը (դեպո, վագոնային տնտեսություն, դիստանցիա և այլն)։ Ճանկոմն իր աշխատանքներով պետք է ընդգրկի ոչ միայն խոշոր հանգույցները, այլ և մանր կայարանները։

Գծի շրջանային կոմիտեները, որ ՄՈՊՐ-ի ստորին բջիջներն իրար հետ կապող հիմնական օղակն են հանդիսանում, ճանապարհային կոմիտեների ուշադրության կենտրոնը պետք է կազմեն։ Համագումարը պարտավորեցնում է ճանկոմներին՝ իրենց առօրյա գործնական աշխատանքների հետ մեկտեղ ուշադրություն դարձնել շրջկոմներին՝ սահմանելով ճանկոմի հրահանգիչներին (վճարովի և հասարակական) վորոշ շրջկոմների կցելու ըսկզբունքը նրանց վրա դնելով շրջանի աշխատանքների վիճակի պատասխանատվությունը։

Յուրաքանչյուր բրիգադ, ցեխ և դեպո, որ ՄՈՊՐ-ի անունն է կրում, պետք է ցույց տա ինտերնացիոնալ աշխատանքի դրվածքի օրինակներ (արտասահմանի հեղափոխական անցքերին ժամանակին արձագանքելը, ինտերնացիոնալ կապի ամրապնդումը, անդամավճարներն ու շեֆական տասկոպեկը ժամանակին ու լրիվ հավաքելը և այլն)։ ՄՈՊՐ-ի անվան բրիգադները հարվածայնորեն պետք է կատարեն իրենց արտադրական առաջադրանքները։



Համագումարը պարտավորեցնում է ճանկոմներին ու շրջկոմներին՝ հաճախակի լսել ՄՈՊՐ-ի անունը կրող ամեն մի բրիգադի աշխատանքի մասին զեկուցումներ, հարվածային մոպրական բրիգադներ կազմակերպել ամեն մի ձեռնարկության մեջ, երկաթուղային հանգույցներում և այլուր, մասսայականացնել լավագույն հարվածային մոպրականների աշխատանքի փորձը։

ՄՈՊՐ-ի ճանապարհային կազմակերպությունները պայքար պետք է մղեն նոր անդամներ հավաքագրելու գործում տեղի ունեցող ինքնահոսի դեմ և վճռականապես բարձրացնեն իրենց պատասխանատվությունը՝ ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի ֆինանսական պլանները կատարելու համար՝ տրանսպորտի մոպրականներին զորակոչելով անդամավճարներն ու շեֆական տասկոպեկները 100 տոկոսով գանձելու համար։

4. Ջրային տրանսպորտում կատարվող ՄՈՊՐ-ի աշխատանքների ծավալեցում հիմնական ուշադրությունը պետք է դարձվի բոլոր նավերի վրա բջիջներ կազմակերպելու, նավանորոգող գործարաններում ու գետախորշերում ՄՈՊՐ-ի կոմիտեներ ստեղծելու, բոլոր բջիջներում անդամավճարներ գանձողների ինստիտուտներ կազմակերպելու, ինչպես և ջրային տրանսպորտի սպասարկած ճանապարհորդների մեջ մասսայական ինտերնացիոնալ աշխատանք կազմակերպելու գործին։

5. Նոր երկաթուղիների, սայլուղիների ու խճուղիների շինարարության գործում բանվորների նոր կադրերի աճումը ՄՈՊՐ-ի ճանկոմների ու տերիտորիալ կազմակերպությունների առաջ խնդիր է դնում ընդգրկել բանվորներին մոպրական ինտերնացիոնալ դաստիարակչական աշխատանքների մեջ։ Անհրաժեշտ է ՄՈՊՐ-ի ակտիվի ուժերով կանոնավոր կերպով ինտերնացիոնալ երեկույթներ ու զրույցներ կազմակերպել շինարարների մեջ, ըստ վորում այդ աշխատանքը պետք է կատարվի ոչ միայն արտադրական ճյուղերում, այլ և ճաշարաններում, հանրակացարաններում և այլն։ Ելակետ ունենալով Մոսկվայի մետրոպոլիտենի շինարարությունը՝ համագումարը հանձնարարում է ՄՈՊՐ-ի ԿԿ-ին՝ հատուկ հսկողության տակ առնել շինարարության բնագավառում մասսայական աշխատանք կազմակերպելու, գրականություն մատակարարելու և այլն գծով կատարվող ՄՈՊՐ-ի աշխատանքները։

6. Համագումարը մատնանշում է, որ տրանսպորտի բնա-

գծավառում կատարվող ՄՈՊՐ-ի մասսայական ինտերնացիոնալ աշխատանքը պետք է ընթանա յերկու հիմնական ուղղությամբ. ա) ՄՈՊՐ-ի կազմակերպությունների ամրապնդման և բ) Ամրապնդել մոպրականների պայքարը հանուն տրանսպորտի առաջ ծառացած արտադրական և տնտեսական խնդիրների լուծման (փոխադրությունների, բարձելու և դատարկելու պլանների կատարում, պայքար հանուն գրաֆիկայի պահպանման, աշխատանքի կարգապահության և այլն)։ Պետք է աշխատել յերկաթուղային ու ջրային տրանսպորտի բոլոր բնագավառներում հատուկ «ինտերնացիոնալ սենյակներ» կազմակերպել, ակումբային աշխատանքի օրացուցային պլանի մեջ ինտերնացիոնալ յերեկույթներ մտցնել, լայն կերպով պետք է օգտագործվեն վագոն-ակումբները՝ գծի վրա կատարվող ՄՈՊՐ-ի աշխատանքները ծավալելու համար, անհրաժեշտ է այդ վագոն-ակումբներին գրականություն, պլակատներ և ագիտացիոն այլ նյութեր մատակարարել։

7. Տրանսպորտում ՄՈՊՐ-ի կադրեր պատրաստելու ասպարեզում պետք է կատարվի հետևյալը՝

ա) Վագոնա-շոգեքարշանորոգ գործարաններում, դեպոներում, գետախորշերում, գարաժներում և այլն, կազմակերպել խմբակներ ու դասընթացներ, համաձայն ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի հնգաղրույց ծրագրի։

բ) ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի Կենտկոմի հեռակա դասընթացները համարել իբրև ուսուցման հիմնական ձև՝ գնացքների բրիգադների, ճանապարհորդների սպասարկման և այլն ՄՈՊՐ-ի ակտիվիստների համար, վորոնք ըստ կատարած աշխատանքի տեսակի, հնարավորություն չունեն ուսուցումն ավարտել մշտական խմբակներում։ 1934—35 ուսումնական տարվա համար հեռակա ուսուցմամբ ընդգրկելու կոնտրոլ թիվ սահմանել վոչ պակաս քան 2000 մարդ, վորի համար հեռակա դասընթացներում տրանսպորտայինների համար հատուկ բաժանմունք կազմակերպել։

գ). Ստորին ակտիվի խմբակների համար ծրագիր մշակել, համաձայն տրանսպորտի աշխատանքների։

8. Համագումարը միանգամայն անբավարար է համարում ՄՈՊՐ-ի բջիջների աշխատանքը՝ տրանսպորտի բնագավառում ՄՈՊՐ-ի արտասահմանյան սեկցիաների և կապիտալիստական յերկրների յենթաշեֆ քաղաքատարկյանների հետ կապ պահպանելու տեսակետից և պարտավորեցնում է ՄՈՊՐ-ի տրանսպորտային կազմակերպություններին՝ իրենց մասսայական աշխատանքների մեջ հատուկ ուշադրություն դարձնել «ինտերֆակ» կազմակերպելու գործին։



Ինտերնացիոնալ նամակագրության մեջ հիմնական ուշադրությունը դարձնել յերկրի անվանի մարդկանց՝ հարվածայիններին ցուցադրելուն, վորոնք պայքարում են սոցիալիստական տրանսպորտի աշխատանքի վորակի բարձրացման համար։

9. Տրանսպորտն սպասարկող յերկաթգծի յուրաքանչյուր շրջանում և գործարանում տպագիր թերթեր լինելու հանգամանքը նպաստավոր հնարավորություններ է ստեղծում մամուլում լուսաբանելու կապիտալիստական յերկրների ու գաղութների աշխատավորության դրությունն ու ՄՈՊՐ-ի աշխատանքի վիճակը ԽՍՀՄ-ում և արտասահմանում։

Համագումարը պարտավորեցնում է տրանսպորտի բնագավառում աշխատող ՄՈՊՐ-ի կոմիտեներին ու բջիջներին՝ հատուկ ուշադրություն նվիրել տպագիր պրոպագանդի գործին, ինչպես և օգտագործել ռադիոն ու ծավալել ՄՈՊՐ-ի պարբերական և վոչ պարբերական մամուլի տարածման աշխատանքները։

10. Համագումարը նշում է, վոր ՄՈՊՐ-ի տերիտորիալ կազմակերպությունները (Միջ—Վոլգյան և Ազով—Սևծովյան յերկրկոմները, ՄՈՊՐ-ի Ուկրաինայի ԿԿ-ը), յերկաթուղային տրանսպորտի աշխատանքների վերակառուցման կապակցությամբ, թուլացրել են իրենց ուշադրությունը դեպի ՄՈՊՐ-ի աշխատանքները՝ տրանսպորտի բնագավառում։ Համագումարը պարտավորեցնում է բոլոր տերիտորիալ կազմակերպություններին՝ անմիջապես վերացնել այս դրությունը և առանձին ուշադրություն նվիրել ճանապարհային կազմակերպություններին, վորի համար՝

ա). Փորձի փոխանակման ու ՄՈՊՐ-ի յերկաթուղային կազմակերպությունների աշխատանքներին աջակցություն ցույց տալու կարգով՝ կոմիտեների նախագահություններում (ազգ. ԿԿ-ի, յերկրկոմի, մարզկոմի, քաղկոմի, շրջկոմի) սիստեմատիկ կերպով զեկուցումներ լսել ՄՈՊՐ-ի բջիջների ու կազմակերպությունների աշխատանքների մասին՝ տրանսպորտի բնագավառում.

բ). Ճանկոմների և գծի շրջկոմների հետ մասսայական կամպանիաների, ինտերնացիոնալ յերեկույթների և այլն փորձերի միջոցով լուսաբանել ՄՈՊՐ-ական աշխատանքները.

գ). Տերիտորիալ ղեկավար օրգանների կազմի մեջ ճանկոմներն ու շրջկոմները պետք է մտցնեն իրենց ներկայացուցիչները։

11. ՄՈՊՐ-ի աշխատանքներն առանձնապես կարևոր համարելով տրանսպորտի մյուս բնագավառներում (ջրային, ավտո

մոբիլ), համագումարը վորոշում է՝ տրանսպորտի բոլոր վերոհիշյալ տեսակներում աշխատանքը վերակառուցել արտադրական—տերիտորիալ սկզբունքներով և ղեկավարությունը հանձնել արտադրական միավորներին (նավահանգիստներին, գործարաններին, գետախորշերին, ավտոպարկներին և այլն)։

Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին՝ վերանայել յերկաթուղային տրանսպորտի բնագավառում աշխատող ՄՈՊՐ-ի ճանկոմների ու շրջկոմների կանոնադրությունը՝ համաձայն ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի 3-րդ գումարման 4-րդ պլենումի վորոշումների (1933 թ. դեկտեմբեր)։

Համագումարն անհրաժեշտ է համարում հայտնել ի գիտություն ՀամԿԽ-ի, վոր մի շարք ճանապարհների (Ցեկատերինսկի, Տոմսկի յերկաթգիծ) արհմիութենական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները միանգամայն աննորմալ են։ Մի շարք դեպքեր են յեղել, վոր դորպրոֆսոժները մասսայական—ինտերնացիոնալ աշխատանքը ծավալելու գործում ՄՈՊՐ-ի ճանկոմներին ու շրջկոմներին ցույց տրվող կոնկրետ օժանդակությանը փոխարինում են հրամաններով, ՄՈՊՐ-ի աշխատակիցներին արձակում են առանց ճանկոմների հետ համաձայնեցնելու և առանց ԿԿ-ի գիտության։ Միաժամանակ համագումարը պարտավորեցնում է ՄՈՊՐ-ի բոլոր ճանկոմներին, շրջկոմներին ու բջիջներին բանվորական զանգվածների մեջ մասսայական—դաստիարակչական աշխատանք կազմակերպելու գործում կատարյալ աջակցություն ցույց տալ արհմիութենական կազմակերպություններին և նորմալ փոխհարաբերություն հաստատել արհմիութենական կազմակերպությունների հետ, այնպիսի փոխհարաբերություն, վոր տրանսպորտի բնագավառում ՄՈՊՐ-ի աշխատանքի ճիշտ դրվածքը ապահովվի։

## ԸՆԴՈՒՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի նյութական բազայի հետագա ամրացումն ու հեղափոխական մարտիկների ոգնության ֆոնդի ուժեղացումը ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր ստորին բջիջի, յուրաքանչյուր կոմիտեյի առաջ դնում է կարևորագույն խնդիրներ։

Համագումարը նշում է, վոր ընթացիկ տարում ֆինանսական աշխատանքի բնագավառում, ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի կիրառած միջոցառումները դիրեկտիվ նախահաշիվների ու պլանայնության սիստեմի նկատմամբ պետք է արմատացնել ՄՈՊՐ-ի բոլոր օղակներում, կիրառելով ֆինանսական աշխատանքի նոր



դրվածքը պրակտիկայում, կիրառելով կենտրոնացած բյուջեյի հիմունքները վերից վար։

Պետք է վերակառուցել ֆինանսական աշխատանքները նոր սկզբունքներով՝ այս սիստեմի կիրառումը ապահովել են տեղական կազմակերպությունների մուտքի ավելացումը հօգուտ հեղափոխական մարտիկների ոգնության ֆոնդին։

Ներկա մուտքը 1930 թ. մուտքի համեմատությամբ կազմում է՝

| | |
|---|---|
| 1931 թ. | 199,5 տոկոս |
| 1932 թ. | 231,6 տոկոս |
| 1933 թ. | 195,8 տոկոս |

2. Համագումարը հավաստիացնում է, վոր ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ֆինանսական աշխատանքի վիճակը, ֆինանսական պլանների կատարումը առանձնապես 1933 թ. հետ են մնում ՄՈՊՐ-ի բազմամիլիոն կազմակերպություններում յեղած հնարավորություններից։

Այս ճեղքվածքը իր արտահայտությունն է գտնում մի շարք խոշորագույն կազմակերպությունների ֆինանսական աշխատանքի մեջ (Ստորին Վոլգա, Հյուսիսային Կովկաս, Ուրալի ԿՍՄ, Ադրբեջան և այլն)։ Այս կազմակերպությունները ֆինանսական աշխատանքի վերաբերմամբ սիստեմատիկորեն չեն կատարել ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի առաջադրանքները։

Վերոհիշյալ կազմակերպությունների անբավարար աշխատանքի հետևանքով ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի սեկցիան անդամավճարների հավաքման գործում վոչ միայն առաջին տեղը չի գրավել, այլև հետ է մնում ՄՈՊՐ-ի արտասահմանյան սեկցիաներից (Սահարայի մարզ, Ֆրանսիա, Իռլանդիա. ՀԱՄՆ), վորոնք աշխատում են սպիտակ տեռորի ու անընդհատ հալածանքների պայմաններում։

3. Համամիութենական 4-րդ համագումարը հանձնարարում է ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի ԿԿ-ին կարճ ժամանակում վերացնել ֆինանսական աշխատանքի բնագավառում առաջացած ճեղքվածքները, վորը ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր ստորին բջիջի, յուրաքանչյուր ակտիվիստի և յուրաքանչյուր անդամի առաջնակարգ խնդիրն է։ Համագումարը գտնում է, վոր 1934 թիվը հանդիսացել է ֆինանսական աշխատանքի կատարման վճռական բեկման տարի։

ՄՈՊՐ-ի կազմակերպությունները պետք է ԽՍՀՄ-ում յեղած բոլոր մոպրականներին զորակոչեն պայքարի, վորպեսզի

հեղափոխության մարտիկների առաջ մեր բոլոր նյութական պարտականությունները կատարվեն։

4. Համագումարը միանգամայն հավանություն ե տալիս այն միջոցառումներին, որ ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ն ձեռք ե առել՝ ֆինանսական աշխատանքները նոր սկզբունքներով վերակառուցելու վերաբերմամբ, սկզբունքներ, որ ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի ֆինանսական բազան կառուցում են-բացառապես կազմակերպված պլանային մուտքի աղբյուրների՝ անդամավճարներ մուծելու, շեֆական տաս կոպեկների և ինտերնացիոնալ շաբաթօրյակներից գոյացած մուտքի հիման վրա։ Համագումարը իրավացի յե համարում ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի որոշումը՝ ՄՕՊՐ-ի աշխատանքների պրակտիկայում գոյություն ունեցող՝ կամավոր նվիրատվությունները, որպես պատահական մուտք, հավաքելու սիստեմի գործադրման մասին։

Միաժամանակ համագումարը գտնում ե, որ ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի ցուցումները ֆինանսական աշխատանքի վերակառուցման մասին, որպես կարևորագույն կազմակերպչական-քաղաքական միջոցառում, ամենուրեք կիրառված չեն յեղել, որ տեղական կազմակերպություններից շատերի ղեկավարները (Պեյտախով՝ Հյուսիսային Կովկաս, Դավիդով՝ Ուրալ, Ռհանով՝ Ադրբեջան, Ռեյզբիխ՝ Ստորին-Վոլգա, Ուզերնով՝ Կենտրոնական սևահող մարզ) չեն կարողացել կազմակերպել ՄՕՊՐ-ի անդամներին և գլխավորել այդ մասսայի հասարակական նախաձեռնությունը՝ ֆինանսական պլանը կատարելու համար մղվող պայքարի ասպարեզում։

ՄՕՊՐ-ի ամեն մի անդամի կողմից իր տարեկան ինտերնացիոնալ պարտականությունները կատարելու— անդամավճարները ու շեֆական տաս կոպեկը ճշտությամբ վճարելու շուրջը մասսայական աշխատանք ծավալելու փոխարեն՝ այդ կազմակերպությունները գործն ինքնահոսի յեն մատնել, չեն կարողացել համախմբել և օգտագործել բջիջների ակտիվը։

5. Այս բանին զուգընթաց, համագումարը շեշտում ե, որ ՄՕՊՐԱԿԱՆ կոպեկը խնայելու խստագույն ռեժիմի, կազմակերպական ծախսերը մաքսիմալ չափով կրճատելու, աշխատանքի ծանրության կենտրոնը կամավոր ակտիվին փոխադրելու համար մղվող պայքարի խնդիրը ՄՕՊՐ-ի բոլոր կոմիտեների առօրյա խնդիրը չի դարձել։ Ծախսերի անթույլատրելի բարձր տոկոս ե տեղի ունեցել մի շարք կազմակերպություններում (ՄՕՊՐ-ի Ադրբեջանի ԿԿ-ի յեկամուտների նկատմամբ ծախսված ե տոկոսներով՝ 100,8 Ստոր-Վոլգայան յերկրում՝ 80,7, Հյուսիսային Կովկասի Ցեռկրկոմը՝ 63,8, ՄՕՊՐ-ի ԿՍՄ-ի մարզկոմը՝ 60,6)։



Համագումարը մատնանշում ե, որ վճարովի ապարատի ծախսերը խիստ կերպով համաձայնեցված պետք ե լինեն իր պահպանության նախահաշվի հետ, վճարովի աշխատակիցների ամեն մի ավելորդ հաստիքը անմիջապես պետք ե կրճատվի և ապարատի ծախսերը մինիմումի պետք ե հասցվի։ Համագումարը հանձնարարում ե ԿԿ-ին՝ յուրաքանչյուր կազմակերպության համար ծախսերի վորոշ տոկոս սահմանել, վորից բարձր ծախսեր լինել չեն կարող։

6. Ցելակետ ունենալով յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարում ԽՍՀՄ-ի ՄՕՊՐ-ի առաջ ընդհանրապես ծառացած խնդիրները, համագումարն ամբողջ կազմակերպության առաջ ֆինանսական աշխատանքի բնագավառի հետևյալ խնդիրն ե առաջադրում.

ա) Ամեն մի առանձին կազմակերպության կողմից ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի առաջ նյութական պարտականությունների առաջնակարգ ու անառարկելի կատարումը՝ համաձայն ԿԿ դիրեկտիվ նախահաշիվների.

բ) Ֆինանսական աշխատանքների նոր սկզբունքների մասին ԿԿ դիրեկտիվների կատարման սիստեմատիկ կազմակերպումը։

գ) Բջիջներին անդամագրքույկ ու մարկաներ տալու նոր սիստեմը իրականացնելու գործում ազգ. ԿԿ-ի, յերկրային, մարզային, շրջանային ու ճանապարհային կոմիտեների պարզ ու անխափան աշխատանքի կազմակերպումը։

դ) Մոպրական միջոցները ծախսելու ու խնայողության խիստ ռեժիմի իրականացումը և ԿԿ-ի կողմից տեղական կազմակերպությունների նախահաշվով ու նախահաշվի ամեն մի հոդվածով բաց թողած միջոցների ամեն անսակ գերածախսերի կանխումը։ Այս խնդիրները կատարելու շուրջն ամենալայն ու կազմակերպչական աշխատանք պետք ե կատարվի՝ սկսած ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ-ի Կենտկոմից մինչև բջիջները։

7. Համագումարն ընդգծում ե Կոմինտերնի ու վերատուգիչ հանձնաժողովների և կոմիտեների վճարովի պաշտոնական անձանց պերսոնալ պատասխանատվությունը ֆինանսական պլանի կատարման համար։ Համագումարը հանձնարարում ե ՄՕՊՐ-ի ԽՍՀՄ ի ԿԿ-ի այն աշխատակիցների նկատմամբ, վորոնք չեն ապահովում ֆինանսական աշխատանքների վերաբերյալ ԿԿ-ի դի-

ըկտիվները, տուգանման խստագույն միջոցները կիրառել, աշխատանքից հեռացնելը, ցածր պաշտոնի փոխադրելը, պատասխանատվության ենթարկելը՝ այդպիսիններին փոխարինելով առաջավոր հարվածային մարտիկներով, վորոնք ապացուցել են, վոր իրենք նվիրված են ՄՈՊՐ-ի գործին և կարող են մասսայական աշխատանք ղեկավարել:

8. Համագումարը պարտավորեցնում է տեղական կազմակերպություններին՝ ընդունել և անշեղ կերպով կատարել 1934 թ. ԿԿ-ի ընդունած նախահաշիվները, վորոնք վորոշում են, թե յուրաքանչյուր կազմակերպություն մտնող ընդհանուր մուծումները և թե յուրաքանչյուր կազմակերպության ծախսերի գումարն ու այն գումարը, վոր առանց ձգձգելու պետք է փոխադրվի ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ն: Համագումարը շեշտում է՝ վոր դիրեկտիվ նախահաշիվների կատարումը հանդիսանում է յուրաքանչյուր բջիջի, յուրաքանչյուր կոմիտեյի կազմակերպչական մարտունակության ցուցանիշը: Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին՝ կազմակերպել յուրաքանչյուր կոմիտեյի կատարած հիմնական պարտականության ստուգումն, պարտավորեցնել բոլոր կոմիտեներին նույն ձևի ստուգում կատարել ստորին կազմակերպությունների գծով:

9. Համագումարը հավանություն է տալիս մասսայական միջոցները գանձելու մասին ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի ԿԿ-ի ընդունած նոր սիստեմին և միանգամայն ճիշտ է գտնում բջիջներին անդամատոմս ու դրոշմանիշներ տալու գործը ՄՈՊՐ-ի շրջանային կոմիտեներին հանձնելը և հանձնարարում է ԿԿ-ին գանձման նոր սիստեմի և բջիջների անդամատոմս ու դրոշմանիշ տալու գործում կոմիտեների սիստեմատիկ ինստրուկտաժ կազմակերպել:

Բջիջներին անդամատոմս ու դրոշմանիշներ տալու գործը շրջանային կոմիտեներին հանձնելը պատճառ չպետք է դառնա վճարովի ապարատի մեծացմանը:

10. Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին՝ վերանայել կոմիտեների ու բջիջների ֆինանսական հաշվետվության գոյություն ունեցող ձևերը՝ այն առավել չափով պարզեցնելու տեսակետից, և միաժամանակ պարտավորեցնում է բոլոր կազմակերպություններին՝ ֆինանսական հաշվետվությունը ժամանակին ներկայացնել:

11. Նշելով, վոր ֆինանսական պլանի կատարումը վճռականապես կախված է հավաքարարի՝ ususrքն ակտիվի կենտրոնական դեմքի հետ կատարվող աշխատանքից, Համագումարը պարտավորեցնում է բոլոր կոմիտեներին ու բջիջներին՝ սիստեմատիկ աշխա-



տանք (խորհրդակցություն, դասընթաց, զրույց և այլն) կատարել գանձողների հետ, առանձնապես ոգտագործելով համամիութենական կոնկուրսի արդյունքները լավագույն գանձողի համար, նրանց աշխատանքի փորձը վողջ կազմակերպությանը հաղորդելու նպատակով: Յուրաքանչյուր կազմակերպություն պարտավոր է հիշել, վոր ֆինպլանի կատարման հաջողությունը ճիշտ հիմքերի վրա դրված մասսայական աշխատանքն ու բջիջում դրամական միջոցներ հավաքելու համար հստակորեն կազմակերպված տեխնիկան է և այն կոնկրետ ոգնությունը, վոր վերադաս կոմիտեներն են սիստեմատիկ կերպով ցույց տալիս բջիջի ստորին ակտիվին, առաջին հերթին՝ անդամավճարներն ու շեֆական տաս կոպեկը գանձողին:

Համագումարը հանձնարարում է ԿԿ-ին՝ գանձողի իրավունքների ու պարտականությունների և աշխատանքի հաշվառման մասին մասսայական տիրաժով հուշատետր հրատարակել:

12. ՄՈՊՐ-ի համամիութենական 4-րդ համագումարը բոլոր կազմակերպություններից պահանջում է՝ ֆինանսական աշխատանքները վճռականապես վերակառուցել նոր հիմունքներով՝ պայքարելով 1934 թ. ընթացքում կատարելապես իրականացնել ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-5-րդ պլենումի (3-րդ գումարման) ցուցմունքները՝ ՄՈՊՐ-ի ֆինանսական աշխատանքի խնդիրների ու ստորին բջիջները կազմակերպչորեն ամրապնդելու մասին:

Համագումարը նշում է, վոր ՄՈՊՐ-ի ԽՍՀՄի ԿԿ-ի ֆինբաժնի աշխատանքների ասպարեզում, առանձնապես 1933 թ., բացակայել է կանոնավոր հիմքերի վրա դրված՝ տեղերի ոպերատիվ ղեկավարությունը, կազմակերպված չի յեղել ֆին աշխատանքի մասին ԿԿ-ի դիրեկտիվները ՄՈՊՐ-ի կոմիտեների կողմից կատարելու ստուգում, ինչպես և կանոնավորված չի յեղել տեղական կազմակերպություններին ինստրուկտաժը:

ՄՈՊՐ-ի համամիութենական 4-րդ համագումարը հանձնարարում է ԿԿ-ին համառ ու վճռական պայքար կազմակերպել բոլոր վերստուգիչ հանձնաժողովներին, ամբողջ ակտիվն ու անդամներին գործնական աշխատանքի զորակոչելով՝ ֆին պլանը ծավալուն սոցիալիստական մրցության ու հարվածայնության հիման վրա կատարելու համար:

# ՄՈՊՐ-Ի ԽՍՀՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՎԱԾ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1. ՍՏԱՍՈՎԱ Ե. Դ. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի նախագահ, Համկ(բ)Կ անդամ։

2. ՇԵՎԵԼՅՈՎԱ Ե. Վ. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ նախագահի տեղակալ, Համկ(բ)Կ անդամ։

3. ԳԵՅԼԵՐ Գ. Մ. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի քարտուղար, Համկ(բ)Կ անդամ։

4) ՉԵՐՆՈՄՈՐԴՆԻԿ Ս. Ի. (Հին բոլշևիկների ընկերությունից), Համկ(բ)Կ անդամ։

5. ՇՊԻԼԵՎ Գ. Ի. (Նախկին քաղտաժանակիրների ընկերությունից) Համկ(բ)Կ անդամ։

6. ՌԱԴԻՆՈՎ Ֆ. Ե. (ՊՈՒԲԿԿՍ) Համկ(բ)Կ անդամ։

7. ՅԱԿՈԲՈՎՍԿԻ Լ. ՅԱ. (ՀԱՄԿԽ), Համկ(բ)Կ անդամ։

8. ԲԱՐԱՆՈՎՍԿԻ Դ. Ի. (ՀԱՄ. ԼԿԵՄ-ի ԿԿ), Համկ(բ)Կ անդամ։

9. ՈՒՐԻՆ Ս. Գ. (ՄՈՊՐ-ի գործկոմ), Համկ(բ)Կ անդամ։

10. ՄԻՆՍԿԵՐ Ֆ. Մ. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

11. ՏԵՍՍԵԼՄԱՆ Ի. Ս. (ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

12. ՈՒՏԿԵՍ Դ. Ի. (ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

13. ՊԱԼԻՑԿԻ Մ. Ա. (ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

14. ԴԻՄԻՏՐԻԵՎ Ա. Դ. (ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

15. ԴԻՐԴՈ Ո. Ս. (ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ից), Համկ(բ)Կ անդամ։

16. ՊԵՐՎՈՒԽԻՆ Ե. Պ. (Մոսկվայի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ։

17. ԿՈՎԱԼՅՈՎԱ Լ. Ա. (Մոսկվայի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ։

18. ԿՈՒԶՆԵՑՈՎ Վ. Մ. (Մոսկվայի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ։

19. ԲԵՆՆՈՎՍԿԱՅԱ Ո. Գ. (Մոսկվայի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ։

20. ՇԱԼՅԱԽԻՆԱ (Մոսկվայի կազմակերպությունից), անկուսակցական բանվորուհի։



21. ԳՐԵՑԲԱԽ Մ. Ի. (Մոսկվայի կազմակերպությունից), (Համկ(բ)Կ թեկնածու, գիտական աշխատող։

22. ԳԼՈՒԽՅԱՐՈՎԱ Ա. Ա. (Ստալինգրադի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ, բանվորուհի։

23. ՄՈԼՉԱՆՈՎ Պ. Ն. (Հյուսիսային կազմակերպությունից), անկուսակցական բանվոր։

24. ԿՐԻՎՉԻԿՈՎ Վ. Կ. (Իվանովսկի կազմակերպությունից) Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

25. ՌԵՋԵՎ ՎԱԿԻԼՈՎ (Թուրքմենստանից), Համկ(բ)Կ անդամ, կոլտնտեսական։

26. ԴՈՐՄԱԼ Տ. Ֆ. (ԲԽՍՀ-ից), Համկ(բ)Կ անդամ, ծառայող։

27. ԿԱՊՈՒՍՏԻՆՍԿԱՅԱ (ԲԽՍՀ-ից), անկուսակցական, բանվորուհի։

28. ԼԻՍՆՅԵՎՍԿԻ Ա. Ի. (Հեռավոր Արևելքից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

29. ՊԵՐՉԻԽԻՆ Դ. Գ. (Լենինգրադի կազմակերպությունից) Համկ(բ)Կ անդամ, ծառայող։

30. ԱԲԱՐԱՏՈՎ Պ. Ս. (Լենինգրադի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ, ծառայող։

31. ՏԵՍՏՈՎ Ի. Ա. (Լենինգրադի կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ, ծառայող։

32. ԿՈՐՈԼԵՎԱ (Լենինգրադի կազմակերպությունից), անկուսակցական, բանվորուհի։

33. ԱՆԴՐՈՇԿԵՎԻՉ Մ. Ո. (ՈՒԽՍՀ-ից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

34. ԱԽՏԻՐՍԿԱՅԱ Ա. Ֆ. (ՈՒԽՍՀ-ից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

35. ԲԵՐԵԼՈՎԻՉ Ռ. Մ. (ՈՒԽՍՀ-ից), անկուսակցական, բանվորուհի։

36. ՎԱՍԻԼԻՆԿՈ Տ. Ն. (ՈՒԽՍՀ-ից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

37. ԿՐՈՎԻՑԿԻ Գ. Ա. (ՈՒԽՍՀ-ից), Համկ(բ)Կ անդամ, ծառայող։

38. ՏՐՈՅԱՆՈՎՍԿԻ Ի. Բ. (ՈՒԽՍՀ-ից), անկուսակցական, բանվոր։

39. ԳՈԼՄԱՆ Ի. Դ. (Ազով-Սևծովյան կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

40. ԴՎՈՐԵՑԿԱՅԱ Ս. Ի. (Ազով-Սևծովյան կազմակերպությունից), Համկ(բ)Կ անդամ, բանվորուհի։

41. ԱԿԻՆՇԻՆԱ (Ազով Սևծովյան կազմակերպությունից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

42. ՍՇԱՅԵՎԱ Մ. Պ. (Միջվոլգյան շրջանից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

43. ՍԻԴՈՐԻՉԵՎ Ի. Ս. (Միջվոլգյան շրջանից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

44. ԿՈԺԵՎՆԻԿՈՎ (Սվերդլովսկի մարզից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

45. ԿՈԶԱԼԵՎ Մ. Ի. (Արեվմտյան Սիբիրից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

46. ՄԵՆՏՅՈՐԻՆ Ն. Ս. (Արևելյան Սիբիրից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

47. ԻԲՐԱՀԻՄՈՎ Մ. Խ. (Ղրիմի կազմակերպությունից) Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

48. ԻԿՐԱՄՈՎ ՍԱԻԴ (Ուզբեկստանից), Համկ(բ)Կ անդամ բանվոր։

49. ՎԱՀՐԱԴՅԱՆ ՑԵԳՈՐ (Հայաստանից), Համկ(բ)Կ անդամ։

50. ՊԱՈՒԼ ՅԱ. Կ. (Գորկու երկրից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

51. ՄՈԳԻԼԵՎՑԵՎԱ Յ. Մ. (Արեվմտյան մարզից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

52. ԳՐՈՒՇԿՈ Յ. Ռ. (Ղազախստանից), Համկ(բ)Կ անդամ բանվոր։

53. ՖՈԿԻՆԱ (Կարելիայից), Համկ(բ)Կ անդամ, գեղջկուհի։

54. ԲԵՐԾ Մ. Ի. (Սարատովի երկրից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

55. ՊՈԳՈԴԻՉԵՎ Գ. Ա. (ԿՍՄ-ից), Համկ(բ)Կ անդամ, բանվոր։

56. ՑՈՒԴԱՆՈՎԱ (ԿՍՄ-ից), անկուսակցական, տնտեսուհի։

57. ՄԱՑԻՆԻՆ (Հյուսիսային Կովկասի կազմակերպությունից) Համ Կ (բ)Կ անդամ, բանվոր։

58. ԳԱՅՆՈԼԼԻՆ Խ. Զ. (Թաթարիայից)։ Համ Կ(բ)Կ անդամ, ծառայող։

59. ՋՈՋՈՒԽԱՇՎԻԼԻ Գ. Ռ. (Վրաստանից), Համ Կ(բ)Կ անդամ, բանվոր։

60. ԱՍԿԼԻԱՇՎԻԼԻ ՆԻՆԱ (Վրաստանից), անկուսակցական բանվորուհի։

61. ՄԻՐԱՇՈՒՐՈՎ (Տաճիկստանից), Համ Կ(բ)Կ անդամ, բանվոր։

62. ՄԻԼՁԱՐԵԿ Ս. Լ. (Չելյաբինսկի մարզից), Համ Կ(բ)Կ անդամ, բանվոր։

63. (Ադրբեյջան)։

# ՄՈՊՐ-Ի ԽՍՀՄ-Ի ԿԿ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

1. ԿՈԶԵՏԿՈՎ Ս. Ի. (Մոսկվայի կազմակերպությունից) Համ Կ(բ)Կ անդամ, բանվոր։

2. ՑԻԳԱՆՈՎԱ Ա. Վ. (Իվանովսկու կազմակերպությունից), անկուսակցական, բանվորուհի։



3. ԿԱՏՈՄԻՆ Մ. Կ. (Լենինգրադի կազմակերպությունից), անկուսակցական, բանվոր։

4. ԴԻԴԵՆԿՈ Ի. Ա. (ՈՒԽՍՀ-ից), Համ Կ(բ)Կ անդամ, բանվոր։

5. ԼԵՅԿԻՆ (Ազով-Սեվծովյան մարզից), անկուսակցական, բանվոր։

6. ԿՈՒՑԵՎ Ն. Պ. (Միջվոլգյան կազմակերպությունից), Համ Կ(բ)Կ անդամ, կոլտնտեսական։

7. ՋԵԺՈՎԱ (Սվերդլովի կազմակերպությունից), անկուսակցական, բանվորուհի։

ԱԴՐԲԵՋԱՆԻ ներկայացուցիչ լրացուցիչ կերպով կնտրվի։

8. ԼԻԲԵԿ Վ. Ի. (արեվմտյան Սիբիրից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

9. ՉԱԿՈՎ Ի., Տ։ (Գորկովի երկրից), անկուսակցական, կոլտնտեսուհի։

10. ՈՒԿՐԱՅԻՆՍԿԱՅԱ (ԿՍՄ-ից), անկուսակցական կոլտըն տեսուհի։

11. ՉԻՐԱԿՈՎԱ (Հյուսիսային Կովկասի կազմակերպությունից), ՀԱՄԼԿՅԵՄ անդամ, ծառայող։

12. ԿՈՒԶԵՊԱՏՈՎ Ա. Պ. (Լենինգրադի կազմակերպությունից), ՀԱՄԼԿՅԵՄ անդամ։

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՆԴԱՄՆԵՐ

1. ՍԿՈԲԵՆՆԻԿՈՎ Ա. Ի. 2. ԲՈՒՐՅԱՆ Բ. Ա. 3. ՈՒՐԲԱՆՈՎԻՉ Պ. Ս. 4. ԲԵԿՄԱՆ Ա. ՅԱ., 5. ՅԱՇՆԵՐ.

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

1, ՊՈՊՈՎ Ա. Ի., 2. ԲԱՐՍՈՒԿՈՎ Ն. Ի.

# ԱՌԱՋԻՆ ՊԼԵՆՈՒՄԸ

ՄՈՊՐ-ի ԿԿ. նորընտիր կազմի առաջին պլենումը տեղի ունեցավ 1934 թ. մարտի 23-ին։ Պլենումը հաստատեց ԿԿ-ի ղեկավար օրգանները՝ հետեվյալ կազմով՝

ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի ԿԿ-ի 4-րդ գումարման պրեզիդիումի կազմը.

1. ՍՏԱՍՈՎԱ ՅԵ. Դ.
2. ՇԵՎԵԼՅՈՎԱ ՅԵ. Վ.
3. ԳԵՑԼԵՐ Գ. Մ.

4. ՉԵՐՆՈՄՈՐԴԻԿ Ս. Ի. (Հին բոլշևիկների ընկերությունից):

5. ՇՊԻԼԵՎ Գ. Ի, նախկին քաղտաժանակիրների ընկերությունից:

6. ՌԱԴԻՆՈՎ Ֆ. ՑԵ, ԲԳԿԲ-ից:

7. ՑԱԿՈԲՈՎՍԿԻ ՀԱՄԿԽ-ից:

8. ԲԱԲԱՆՈՎՍԿԻ Դ. Ի. Համ. ԼԿՅԵՄ-ից:

9. ՈՒՐԻՆ Ս. Գ. ՄՈՊՐ-ի Գործկոմից:

10. ՊԵՐՎԱԽԻՆ ՑԵ. Պ. Մոսկվայի կազմակերպությունից:

11. ԿՈՒԶՆԵՑՈՎ Վ. Մ. Մոսկվայի կազմակերպությունից:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

1. ԳԵՐՑԲԱԽ Մ. Ի. ՄՈՊՐ-ի Մոսկվայի կազմակերպությունից:

2. ԴՈՒՄԲԱԼ Տ. Ֆ. ՄՈՊՐ-ի Բելոռուսիայի կազմակերպությունից:

3. ՊԵՐՉԵԽԻՆ Գ. Գ. ՄՈՊՐ-ի Լենինգրադի կազմակերպությունից:

4. ՎԱՍԻԼԵՆԿՈ Գ. Ն. ՄՈՊՐ-ի Ուկրաինական կազմակերպությունից:

## ՄՈՊՐ-Ի ԽՍՀՄ-Ի ԿԿ-Ի ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

1. ԳԵՑԼԵՐ Գ. Մ. – ԿԿ-ի քարտուղար:

2. ԴԻՄԻՏՐԻԵՎ Ս. Դ. – Արգ. տրանսպորտի բաժվար, քարտ. տեղակալ:

3. ՄԻՆՍԿԵՐ Ֆ. Մ. – Գյուղատնտեսական բաժվար, քարտուղարի տեղակալ:

4. ԼԻՐԴՈ – ԿԿ. անդամ, պրոպագանդի բաժվար:

5. ՏԵՍՍԵԼՄԱՆ Ի. Ա. – ԿԿ անդամ, Ինտերկլուբի բաժվար:

6. ՇԵՎՑԱԿՈՎ Ն. Ն. – Հրատարակչության բաժվար:

7. ԼՈՐԵՆՑ Ո. ՅԱ. – Քաղէմիգրացիայի բաժվար:

## "ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՄԱՅԱԿ" ԺՈՒՐՆԱԼԻ ԽՄԲԿՈԼԻ ԿԱԶՄԸ

1. ԳԵՑԼԵՐ Գ. Մ. Պատասխանատու խմբագիր:

2. ԳԵՐՑԲԱԽ Մ. Ի. – խմբկոլի անդամ

3. ՇՈՐՐ Մ. – » » (ՄՈՊՐ-ի Գործկոմ)

4. ՎՈԼԻՆՍԿԻ Լ. Մ.

5. ԿՈՎԱԼՑԵՎԱ Լ. (ՄՈՊՐ-ի ԿԿ-ից)



ՀՍՍՌ-Арм.ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0219959